МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«26» փետրվարի 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ԾԽՆԵԼՈՒԶԱԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՐՎԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կարիքների համար «Հրակայուն-հականեխիչ նյութերով փայտե կառուցատարրերի տոգորման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-23/40» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչված «Ծխնելուզագործական սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Մասնակից) հետ 2023 թվականի հոկտեմբերի 13-ին կնքվել է «ԲԷՑ-ԳՀԱՇՁԲ-23/40» ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված N 1-ով (տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց) աշխատանքների կատարման ժամկետ սահմանվել է 40 աշխատանքային օր՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, սակայն մինչ օրս աշխատանքները Մասնակցի կողմից չեն կատարվել:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները (մասնավորապես 2.1.3 կետի «բ» պարբերությունը) Պատվիրատուն միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը 2024 թվականի փետրվարի 15-ին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Պայմանագրի դրույթներով և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, որոշեցի՝

1. «Ծխնելուզագործական սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազորված մարմնին և Մասնակցին տրամադրելու օրվանից:

3. Որոշումը կայացվելու հաջորդող օրն այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Ծխնելուզագործական սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

Հարգանքով՝

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ

Կատարող՝ գնումների և մատակարարման բաժնի
գլխավոր մասնագետ Մելինե Սողոյան հեռ. 060 38-00-40, 077 19-80-99